

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ ԿԱՐԱՊԵՏԻ

ԱԼԱՎԻՆԵՐԻ ԴԵՐԸ ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՋԱՂԱՋԱԿԱՆ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ (1970-2000 ԹԹ.)

Է.00.02. «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի

գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2011

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝

պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆ.՝ Ա.Պ. Փոլադյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆ.՝ Վ.Ա. Բայբուրդյան
պատմական գիտությունների թեկնածու,
դոցենտ՝ Ա.Ա. Փաշայան

Առաջատար կազմակերպություն՝

Խ. Արովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2011 թ. հունիսի 16-ին, ժ. 15.00-ին, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական աստիճաններ շնորհող ՀՀ ԲՈՀ-ի 006 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում

Մեղմագիրն առաքված է 2011 թ. մայիսի 14 -ին:

Մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար

Ռ. Ղազարյան

1. ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հաֆեզ Ալ-Ասադի իշխանության տարիներին /1970-2000/ Սիրիայում ալավիների ռազմաքաղաքական իշխանության հաստատման և երկրի ներքաղաքական զարգացումներում նրանց դերակատարության համակողմանի ուսումնասիրությունն ունի գիտական և քաղաքական կարևոր նշանակություն:

1963 թ. Արաբական վերածնունդ սոցիալիստական կուսակցության (այսուհետ՝ Բաաս) և հատկապես 1970 թ. Հաֆեզ Ալ-Ասադի իշխանության գալուց հետո Սիրիայում հաստատվեց ալավիական փոքրամասնության ռազմաքաղաքական ավտորիտար իշխանություն, որը սուննիական մեծամասնությամբ երկրում առաջ բերեց ներհամայնքային երկփեղկվածություն: Ներքաղաքական լարվածության խորացմանն էլ ավելի նպաստեց «Մուսուլման եղբայրներ» կրոնաքաղաքական կազմակերպության պայքարն ալավիական-բաասական վարչակարգի դեմ: Եվ, չնայած ներքին կյանքի դժվարություններին, ալավիական վարչակարգի հաստատմամբ, այնուամենայնիվ, նպաստավոր իրավիճակ ստեղծվեց Սիրիայի հետագա զարգացման համար: Հաֆեզ Ալ-Ասադի իշխանության գալուց հետո Սիրիան պետական կառավարման համակարգերի ձևավորման և ամրապնդման առումով թևակոխեց զարգացման որակապես նոր փուլ: 1946 թ. անկախության նվաճումից ի վեր Սիրիայում հեղաշրջումներով բնորոշվող շրջափուլերին հաջորդելու եկավ հարաբերական կայունության մի տևական ժամանակաշրջան: Հենց Ալ-Ասադի իշխանության օրոք ձևավորվեցին երկրի քաղաքական ու տնտեսական զարգացման նոր մոտեցումներ, ինչի շնորհիվ ալավիական վարչակարգը կարողացավ հաջողությամբ դիմագրավել ներքին և արտաքին մարտահրավերները՝ առաջընթաց ապահովելով երկրի առջև դրված խնդիրների իրականացման հարցում: Սիրիայի ներքաղաքական գործընթացներում ալավիների ակտիվ դերակատարությունը հնարավոր դարձավ հատկապես ռազմական բնագավառում վերջիններիս լայն ներգրավվածության շնորհիվ: Անկախության ձեռքբերումից հետո ազգային բանակի ձևավորման գործընթացում աստիճանաբար մեծանում էր Սիրիայի զինված ուժերում (այսուհետ՝ ՁՈւ) էթնիկ փոքրամասնությունների ներգրավման ցուցանիշը: Վերջիններիս համար ռազմական ոլորտը ոչ միայն առաջընթացի, այլև սոցիալիզացման բացառիկ հնարավորություն էր, ինչը սուննիների, որպես մեծամասնության, օրակարգում չկար: Բաաս կուսակցության և հետագայում՝ Հաֆեզ Ալ-Ասադի իշխանության գալուց հետո ալավիները հնարավորություն ստացան ամրապնդել դիրքերը Սիրիայի ռազմական համակարգում: Պետական համակարգի և ալավիական համայնքի շահերը նույնացվեցին, ինչը հանգեցրեց ալավիների ռազմաքաղաքական դերի մեծացմանը: Հաֆեզ Ալ-Ասադը պետական կառավարման համակարգում իր դիրքերն ամրապնդելու համար առաջին հերթին հաշվի էր առնում ալավիական համայնքի գործոնը:

Ալավի ռազմական գործիչներին զինվորական և քաղաքական բարձր պաշտոններում նշանակելով՝ նա լուրջ նախադրյալներ էր ստեղծում երկրի ներսում ամուր ռազմաքաղաքական համակարգի ձևավորման համար: Հարկ է նշել, որ առանց նշված իրողությունների ուսումնասիրության գրեթե անհնար կլինի հասկանալ արդի Սիրիան և դրանում ընթացող ներքաղաքական գործընթացների ներկա տրամաբանությունը: Թեմայի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հասկանալ նաև Սիրիայի ալավիական վարչակարգի ոչ միայն ներքին, այլև արտաքին քաղաքականության առանձնահատկությունները: Հատկանշական է, որ նշված ժամանակաշրջանում Սիրիան Մերձավոր Արևելքի ամենաազդեցիկ երկրներից մեկն էր: Այս առումով, ոչ պակաս կարևոր է Սիրիայի դերը տարածաշրջանի արդի փուլի զարգացումներում:

Թեման արդիական է նաև Հայաստանի Հանրապետության տարածաշրջանային քաղաքականության հիմնադրույթների մշակման և հայ-սիրիական հարաբերությունների ուսումնասիրման տեսանկյունից՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության մերձավորարևելյան ուղղության և Սիրիայի՝ Հայաստանի կարևոր գործընկերներ լինելու հանգամանքը: Թեմայի արդիականությունը կապված է նաև Սիրիայում ստվարածավալ հայ համայնքի գոյության փաստի հետ, որը կարևոր գործոն է հայ-սիրիական հարաբերություններում:

2. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ատենախոսության թեմայի ընտրությունը պայմանավորված է 1970-2000 թթ. ընթացքում Սիրիայի ներքաղաքական գործընթացներում և ռազմական ոլորտում ալավիների դերկատարության համակողմանի և հիմնարար ուսումնասիրության անհրաժեշտությամբ: Նշված խնդիրն իրականացնելու համար հեղինակն իր առջև դրել է հետևյալ խնդիրները՝

- հետազոտել ալավիների կրոնահամայնքային առանձնահատկությունները,
- քննության ենթարկել Սիրիայում ալավիների իշխանության հաստատման ընթացքը,
- ուսումնասիրել 1963 թ. մարտի 8-ին տեղի ունեցած հեղափոխությունից հետո Սիրիայի Արաբական Հանրապետությունում իշխանության եկած Բասս կուսակցության և դրա ներսում ալավիական իշխանակարգի ձևավորման միտումները,
- բացահայտել ալավիների ռազմաքաղաքական իշխանության հաստատման գործընթացը և ցույց տալ դրա զարգացումը Հաֆեզ Ալ-Ասադի իշխանության տարիներին,
- վերլուծել պետական համակարգում ալավիների ազգակցական, ցեղային և

համայնքային շահերի համադրման արդյունքում նրանց գերիշխող դիրքեր գրավելու պատճառները,

- պարզաբանել Սիրիայում ալավիների ռազմաքաղաքական դիրքերի ամրապնդմանն ուղղված քայլերը և դրան նպաստող հիմնական գործոնները,
- ուսումնասիրել ալավիական վարչակարգի դեմ «Մուսուլման եղբայրների» մղած պայքարի դրդապատճառները, ընթացքը և հետևանքները,
- բացահայտել 1980-ական թթ. առաջին կեսին Սիրիայում սկսված ներքաղաքական ճգնաժամը և ուժերի հավասարակշռությունն ալավիական վերնախավում՝ մասնավորապես Հաֆեզ Ալ-Ասադի և Ռիֆաթ Ալ-Ասադի միջև նախագահի պաշտոնի համար ծավալված պայքարի առանձնահատկություններն ու հետևանքները,
- ուսումնասիրել հետճգնաժամային ժամանակշրջանը Սիրիայում 1986-1992 թթ.,
- հետազոտել ԽՍՀՄ փլուզումից հետո՝ աշխարհաքաղաքական նոր իրողությունների պայմաններում, Սիրիայի ներքաղաքական կյանքում ծառայած խնդիրներն ու ալավիական վերնախավում տեղի ունեցած վերածակավորումները՝ Սիրիայում իշխանության հաջորդականության նախապատրաստման լույսի ներքո:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Սիրիայի ներքին քաղաքականության հետ կապված առանձին հիմնախնդիրներ, մասնավորապես Բաաս կուսակցության իշխանության գալու գործընթացը, արաբ-խարայելական հակամարտության նկատմամբ Սիրիայի որդեգրած դիրքորոշումը և մերձավորարևելյան տարածաշրջանում Սիրիայի ռազմաքաղաքական դերը հանգամանորեն հետազոտվել են հայրենական, արևմտյան, ռուսաստանցի, ինչպես նաև խորհրդային հետազոտողների աշխատություններում: Սակայն Սիրիայում ալավիական վարչակարգի իշխանության գալը, ալավիների իշխանության հիմնական առանձնահատկությունները ու նրանց դերակատարությունը երկրի քաղաքական և ռազմական ոլորտներում, չեն դարձել ամբողջական գիտական ուսումնասիրության առարկա: Ատենախոսության թեման հայրենական արաբագիտության մեջ դեռևս չի արժանացել առանձին և համակողմանի ուսումնասիրության: Սույն աշխատանքն իր բովանդակությամբ և հարցադրումներով նոր փորձ է ընդարձակ փաստագրական նյութի, այդ թվում՝ շրջանառության մեջ դեռևս չդրված սկզբնաղբյուրների և գիտական աշխատությունների ուսումնասիրությամբ, նորովի մեկնաբանել Սիրիայի պատմության նշված շրջանը և դրանում ալավիական գործոնի նշանակությունը:

4. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ժամանակագրական տեսանկյունից ատենախոսությունն ընգրկում է Հաֆեզ Ալ-Ասադի իշխանության երեսուն տարիները՝ 1970-ական թթ. սկզբից մինչև 2000թ.: Ժամանակագրական սահմանների ընտրությունը պայմանավորված է Հաֆեզ Ալ-Ասադի իշխանության հաստատման արդյունքում Սիրիայում ստեղծված քաղաքական նոր իրողությունների հետ: Հաֆեզ Ալ-Ասադի իշխանության առաջին տասնամյակում Սիրիան թևակոխեց զարգացման որակական նոր փուլ՝ ամրապնդելով իր դիրքերը տարածաշրջանում և ապահովելով երկրի ներսում հարաբերական կայունությունը: 2000 թ. հունիսի 17-ին՝ Հաֆեզ Ալ-Ասադի մահից հետո, Սիրիայի հաջորդ նախագահ դարձավ վերջինիս որդին՝ Բաշար Ալ-Ասադը, ով հիմնականում շարունակելով հոր քաղաքականությունը, այնուամենայնիվ, որոշ սրբագրումներ կատարեց Սիրիայի ներքին և արտաքին քաղաքականության հիմնական գերակայություններում:

5. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՍԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ատենախոսության մեթոդաբանական հիմքում ընկած են Սիրիայում ալավիների ռազամաքաղաքական դերի բարձրացման, նրա նախադրյալների և գերակայությունների իրականացման գործընթացի հետ կապված տարատեսակ հարցադրումների, տեսակետների և աղբյուրագիտական նյութի վերլուծությունն ու փաստերի համեմատական-համադրական ուսումնասիրությունը:

6. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության մեջ առաջ քաշված հիմնական դրույթները, մեկնաբանություններն ու եզրահանգումները կարող են օգտակար լինել Սիրիայի նորագույն պատմության ներքին քաղաքականության հիմնահարցեր ուսումնասիրման համար: Դրանք կարող են օգտագործվել նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների մասնագիտական դասընթացներում, ինչպես նաև ընդհանուր կրթական ծրագրերում:

Աշխատանքում տեղ գտած տարբեր գնահատականներն ու մեկնաբանությունները կարող են կիրառվել Հայաստանի պետական համապատասխան մարմիններում թե՞ Միջին Արևելքի և թե՞ մասնավորապես Սիրիայի վերաբերյալ քաղաքական մոտեցումների մշակման, ինչպես նաև վերլուծական նյութերի պատրաստման տեսանկյունից:

7. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդում, քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Արաբական երկրների բաժնի նիստում:

Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները ներկայացվել են հեղինակի հրապարակած գիտական հոդվածներում, երիտասարդ արևելագետների հանրապետական գիտաժողովում ներկայացված զեկույցում:

8. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿՋԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՌՈՑ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Աշխատությունը գրվել է հայերեն, ռուսերեն, արաբերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով տարաբնույթ աղբյուրների ու ուսումնասիրությունների հիման վրա: Հեղինակն աշխատել է Հայաստանի Ազգային, ՀՀ ԳԱԱ Հիմնակազմ և ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի, Գամասկոսի Հաֆեզ Ալ-Ասադի անվան, ինչպես նաև Գամասկոսի արաբագիտական հետազոտությունների ֆրանսիական ինստիտուտի գրադարաններում: Հետազոտությանը մեծապես նպաստել են պաշտոնական հրատարակումները, քաղաքական գործիչների հայտարարություններն ու ելույթները, պարբերականները, հայ և օտարազգի հետազոտողների՝ վերոհիշյալ թեմային նվիրված արժեքավոր աշխատություններն ու հոդվածները:

Ատենախոսության մեջ քննարկվող խնդիրների ուսումնասիրության համար որպես սկզբնաղբյուր են ծառայել Բասս կուսակցության համաժողովների նյութերի ժողովածուները¹, ուղղիչ շարժման քաղաքականությանը նվիրված պաշտոնական նյութերն ու փաստաթղթերը², Հաֆեզ Ալ-Ասադի ու սիրիացի քաղաքական, պետական մի շարք գործիչների՝ տարբեր առիթներով ունեցած ելույթների ու հարցազրույցների հրապարակումները³, որոնք հնարավորություն են ընձեռել իրական պատկերացում կազմել

¹ Minutes of the sessions of the Tenth Extraordinary National Congress of the Ba'th Party, فضل عفاش, المجالس الشعبية و النيابية في الوطن العربي. الجزء الاول. مجلس الشعب في السورية 1928-1988, المؤتمرات القطرية لحزب البعث العربي الاشتراكي في القطر العربي السوري, حزب البعث العربي الاشتراكي. القيادة القومية. مكتب الثقافة و الإعداد الحزبي. المؤتمرات القطرية لحزب البعث العربي الاشتراكي في القطر العربي السوري. الحركة التصحيحية المجيدة في الذكرى الخامسة و العشرين, دمشق, 1995, ص. 161.

² Patrick Seale's interviews with president Hafez al-Asad, Interview with Ahmad al-As'ad, Hama party secretary, Hama, 25 April, 1985, Speech of Rifat al-Asad to the Ba'ath party's Seventh Regional Congress from 23 December 1979- 6 January 1980. Interview with Basil al-Asad, Damascus, 19 March, 1988. مجموعة خطب الفريق القائد حافظ الاسد.

ոչ միայն Սիրիայում 1970-2000 թթ. ընթացքում տիրող ներքաղաքական իրադրության, այլև՝ ալավիների ռազմաքաղաքական իշխանության հաստատման հիմնական պատճառների ու դրա արդյունքում երկրում պետական ուժեղ համակարգի կազմավորման առանձնահատկությունների մասին:

Թեմայի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեն արաբ հեղինակներ Մուստաֆա Տլասի⁴, Մուհամմադ Ամին Ղալիբ Ալ-Տաուիլի⁵, Մունզիր Ալ-Մուսալի⁶, Հաշիմ Օսմանի⁷ աշխատությունները: Դրանցում առկա են մի շարք կարևոր փաստեր ինչպես ալավիների կրոնահամայնքային առանձնահատկությունների, այնպես էլ տվյալ ժամանակահատվածում ալավիների ռազմաքաղաքական իշխանության հաստատման համար Սիրիայում ստեղծված ներքին և արտաքին նախադրյալների մասին:

Մասնավորապես Մուստաֆա Տլասի և Մունզիր Ալ-Մուսալի աշխատություններում, թեև առկա են որոշ վերապահ մոտեցումներ Սիրիայում ալավիական վարչակարգի իշխանության ձևավորման և Սիրիայի ռազմաքաղաքական կյանքում ալավիների ունեցած ազդեցության մասին, այնուամենայնիվ, նրանց աշխատությունները օբյեկտիվորեն արտացոլում են տվյալ ժամանակաշրջանի Սիրիայի ներքաղաքական և ռազմական կյանքի շատուշատ իրողությունները: Մասնավորապես Մուստաֆա Տլասի «Իմ կյանքի պատմությունը» քառահատոր աշխատության առաջին և չորրորդ հատորներում համակողմանի անդրադարձ է կատարված Բաաս կուսակցության իշխանության անցնելու գործընթացի մանրամասներին և Հաֆեզ Ալ-Ասադի իշխանության տարիներին Սիրիայում տեղի ունեցած ներքաղաքական կարևոր իրադարձություններին:

Ատենախոսության մեջ քննարկվող մի շարք հարցերի լուսաբանմանը մեծապես նպաստել են Ն. Հովհաննիսյանի⁸, Շ. Կարամանուկյանի⁹, Ռ. Կարապետյանի¹⁰, Ե. Պրիմակովի¹¹, Լ. Հարությունյանի¹², Ա. Փաշայանի¹³ արժեքավոր աշխատությունները, որոնք օգտակար են եղել հատկապես 1970-2000 թթ. ընթացքում Սիրիայի

.30.081981 24.02.1980, الكتاب الاول,

⁴ صطفي طلاس. مرآة حياتي. العقد الرابع, الطبعة الثانية, دمشق, 2007, مصطفى طلاس, مرآة حياتي, العقد الاحد, الطبعة الثانية, دمشق, 2007.

⁵ محمد امين غالب الطويل, تاريخ العلويين, دار الاندلس, بيروت, 1966.

⁶ منذر الموصلي, البحث عن الذات الجذور, العلويون العرب السوريون, دمشق, 2007.

⁷ هاشم عثمان, حل العلويون شيعة, بيروت, لبنان, 1980.

⁸ Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. III, Երևան, 2006, Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. IV, Անկախության և ինքնիշխանության դարաշրջան, 1918-2005թթ., Երևան, 2007, Հովհաննիսյան Ն., Իրան. Այաթոլլահ Խոմեյնիի դարաշրջանը, Երևան, 2004, Հովհաննիսյան Ն., Սարգսյան Հ., Սիրիան անկախության համար մղված պայքարում, (1917-1946թթ.), Երևան, 1975:

⁹ Կարամանուկյան Շ., Արաբական պետությունների լիզայի դերն արաբական երկրների հակաիմպերիալիստական պայքարում, Երևան, 1988,

¹⁰ Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Երևան, 2003, Կարապետյան Ռ., Սիրիա-ամերիկայի հարաբերությունները 1967-1996թթ., Երևան, 2000:

¹¹ Պրիմակով Ե., Սի դավադրության պատմություն, ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականությունը 70-ական թթ. և 80-ական թթ. սկզբներին, Երևան, 1987:

¹² Հարությունյան Լ., Լիբանանը 1958-1990 թվականներին, Երևան, 2007:

¹³ Փաշայան Ա., Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը. նպատակները, գործունեությունը, դիրքորոշումը դարաբաղյան հակամարտության նկատմամբ, Երևան, 2003:

մերձավորարևելյան քաղաքականության հիմնական ուղղությունները ճիշտ պատկերացնելու և Սիրիայում տիրող ներքաղաքական իրավիճակի վրա արտաքին ազդեցության ընկալման տեսանկյունից: Հիշյալ աշխատությունները պարունակում են նաև կարևոր փաստագրական և վերլուծական նյութ տարածաշրջանում ծավալված գործընթացներում Սիրիայի ունեցած դերի և նշանակության մասին: Օրինակ, Ն. Հովհաննիսյանն իր «Արաբական երկրների պատմություն» աշխատության չորրորդ հատորի «Սիրիայի Արաբական Հանրապետություն» գլխում անդրադառնում է Սիրիայի 20-րդ դարի պատմությանը՝ հանգամանորեն ներկայացնելով Բաաս կուսկցության իշխանության հաստատումը Սիրիայում և Հաֆեզ Ալ-Ասադի նախագահության տարիները: Հեղինակը վերլուծում է 1970-2000 թթ. Սիրիայում տեղի ունեցող ներքաղաքական գործընթացները: Չորրորդ հատորում հանգամանակից վերլուծության են ենթարկված 1970-2000 թթ. Սիրիայում տեղի ունեցած կարևորագույն իրադարձությունները: Հեղինակը մանրամասն լուսաբանել է Սիրիայի դերն արաբ-իսրայելական հակամարտության լուծման գործում: Աշխատությունում հավուր պատշաճի ներկայացվում են 1983-1984 թթ. Սիրիայում բռնկված ներքաղաքական ճգնաժամի պատճառներն ու ընթացքը: Խնդրո առարկա թեմայի ուսումնասիրման համար կարևոր նյութեր է պարունակում Լ. Հարությունյանի «Լիբանանը 1958-1990 թվականներին» աշխատությունը, որտեղ հեղինակը հանգամանորեն ներկայացնում է Սիրիայի բաասական վարչակարգի դիրքորոշումը Լիբանանի քաղաքացիական պատերազմի (1975-1990 թթ.) նկատմամբ, քանի որ այդ ժամանակահատվածում Սիրիայի մերձավորարևելյան քաղաքականության ուղղությունները պայմանավորված էին նաև լիբանանյան գործոնով:

Ռուսաստանցի հեղինակներ Է. Փիր-Բուդադովայի¹⁴, Վ. Ախմեդովի¹⁵, Վ. Սաուտովի¹⁶, Կ. Պոլյակովի և Ա. Խասյանովի¹⁷, Ա. Ֆիլոնիկի¹⁸, Վ. Յուրչենկոյի¹⁹ և այլոց աշխատությունները ևս մեծ կարևորություն են ներկայացնում թեմայի տարբեր ասպեկտների քննության համար: Այդ աշխատություններում առկա են բազմաթիվ հույժ օգտակար փաստեր, որոնք էապես նպաստում են Սիրիայում ալավիների ռազմաքաղաքական իշխանության հաստատման մանրամասների ուսումնասիրմանը և ալավիական վարչակարգի ռազմաքաղաքական կառուցվածքի ու նրանց վարած ներքին և

¹⁴ Пир-Будагова Э., Сирия в Борьбе за Упрочение Национальной Независимости (1945-1966), Москва, 1978,

¹⁵ Ахмедов В. М., Армия и Политика в Современной Сирии, Армия и Власть на Ближнем Востоке: от Авторитаризма к Демократии (сборник статей), М., 2002.

¹⁶ Саутов В. Н., Сирийские Алавиты в Новейшее Время, Материалы I-ой конференции арабистов Институт востоковедения РАН, Институт изучения Израиля и Ближнего Востока, Москва, 1996.

¹⁷ Поляков К., Хасянов А., Проблема Стабильности Сирии в XXI Веке, Ближний Восток и Современность, Сборник статей (выпуск десятый), Москва, 2000.

¹⁸ Филоник А., Хафез Асад: призвание-гражданин, Арабские Страны Западной Азии и Северной Африки (Новейшая История, Экономика и Политика), Москва, 1997.

¹⁹ Юрченко В. П., Сирия: Проблемы Национальной Безопасности (Военная Политика и Военная Строительство в Период Правления ПАСВ (1963-2004 гг.), М., 2004.

արտաքին քաղաքականության առանձնահատկությունների պարզաբանմանը: Սիրիական բանակի ձևավորման և բանակում, հատուկ ծառայություններում ալավիների ներկայացվածության մասին արժեքավոր տեղեկություններ է տրամադրում Վ. Ախմեդովն իր «Բանակն ու քաղաքականությունը ժամանակակից Սիրիայում, բանակն ու իշխանությունը Մերձավոր Արևելքում, բռնատիրությունից ժողովրդավարություն» մեծածավալ հոդվածում: Հեղինակը հանգամանորեն վերլուծում է ալավիական համայնքի ներկայացուցիչների ներգրավվածությունը Սիրիայի ՋՌԻ համակարգում և անդրադառնում երկրի քաղաքական անցուղարձի վրա զինվորականների ունեցած ազդեցությանը: Սիրիայի ՋՌԻ-ի կառուցվածքում ալավի բարձրաստիճան զինվորականների գործունեությանը և երկրի ռազմական քաղաքականության ձևավորման մանրամասներին հանգամանորեն անդրադառնում է նաև Վ. Յուրչենկոն իր «Ազգային անվտանգության հիմնախնդիրները. ռազմական քաղաքականությունը և բանակաշինությունը Բաաս կուսակցության իշխանության տարիներին (1963-2004թթ.)» աշխատության մեջ²⁰:

Ալավիական համայնքի կրոնահամայնքային առանձնահատկությունների, Սիրիայում նրանց դերի բարձրացման, բարձրաստիճան ալավի զինվորականների ծագման, Հաֆեզ Ալ-Ասադի հիմնած ալավիական-բաասական նոր վարչակարգի, «Մուսուլման եղբայրների» և վարչակարգի միջև ծավալված պայքարի ու իշխանության հաջորդականության նախապատրաստման խնդիրներն ավելի ճիշտ ըմբռնելուն մեծապես օգնել են արևմտյան հեղինակներ Մ. Մուսայի²¹, Մ. Քրամերի²², Հ. Բատատուի²³, Ս. Աբու Ջաբեր Բամալի²⁴, Հ. Դեքմեջյանի²⁵, Ա. Դրայադեյի²⁶, Մ. Ֆակշի²⁷, Ռ. Հիններուչի²⁸, Ֆ. Լեվերեթի²⁹, Թ. Մայերի³⁰, Մ. Մաոզի³¹, Դ. Փայսիսի³², Ի. Ռափինովիչի³³, Ու. Ֆ.

²⁰Юрченко В. П., Сирия: Проблемы Национальной Безопасности (Военная Политика и Военная Строительство в Период Правления ПАСВ (1963-2004 гг.), М., 2004.

²¹Moosa M., Extremist Shiites, The Ghulat Sects, Syracuse University Press, New York, 1987.

²²Kramer M., Syria's Alawis and Shi'ism in Shiism, Resistance, and Revolution, ed. Martin Kramer, Boulder, Colorado: Westview Press, 1987.

²³Batatu H., Some Observations on the Social Roots of Syria's Ruling, Military Group and the Causes for Its Dominance, Middle East Journal, Vol. 35, No 3, 1981.

²⁴Abu Jaber Kamal S., The Arab Ba'th Socialist Party, History, Ideology and Organisation, Syracuse University Press, New York, 1966.

²⁵Dekmejian H., Islam in Revolution, Fundamentalism in the Arab World, Second Edition, Syracuse University Press, 1995.

²⁶Drysdale A., Syrian Political Elite, 1966-1976, A Spatial and Social Analysis, Middle Eastern Studies, Vol. 17, N 1, 1987.

²⁷Faksh M. A., The Alawi Community of Syria: A New Dominant Political Force, Middle Eastern Studies, Vol. 20, N 2, 1984.

²⁸Hinnebusch R., Authoritarian Power and State Formation in Baathist Syria: Army, Party and Peasant, Oxford, Westview Press, 1990, Hinnebusch R., Syria, Revolution from Above, Routledge, London and New York, 2001.

²⁹Leverett F., Inheriting Syria, Bashar's Trial by Fire, Brookings Institution Press, Washington, 2005.

³⁰Mayer T., The Islamic Opposition in Syria, 1961-1982, Orient, December, 1983.

³¹Maoz M., Syria Under Hafiz al-Asad: New Domestic and Foreign Policies, The Hebrew University of Jerusalem, 1975, Maoz M., The Sphinx of Damascus, A Political Biography, Weidenfeld and Nicolson, London, 1988.

³²Pipes D., Greater Syria, The History of an Ambition, New York, 1990, Pipes D., The Alawi Capture of Power in Syria, Middle Eastern Studies, V. 25, N 4, London, 1989.

Աբդալլահի³⁴, Է. Ջիսսերի³⁵ արժեքավոր աշխատությունները: Այսպես, Մատի Մուսան, հիմնվելով ալավի հեղինակների աշխատությունների վրա, իր «Ծայրահեղական շիաներ. դուլաթ ադանդներ» աշխատության մեջ մանրամասնորեն ներկայացնում է ալավիների կրոնահամայնքային առանձնահատկությունները՝ ալավիներին ներկայացնելով որպես ոչ բարեպաշտ մուսուլմանների:

Ալավիների կրոնական առանձնահատկություններին և համայնքի տոհմացեղային կառուցվածքին են անդրադառնում Դանիել Փայփսն իր «Մեծ Սիրիա. հավակնության պատմություն» աշխատության մեջ, Մարթին Զրամերն իր «Սիրիայի ալավիներն ու շիայականությունը շիզմի, դիմադրության և հեղափոխության լույսի ներքո» և Մահմուդ Ֆակչն իր «Սիրիայի ալավիական համայնքը. նոր գերիշխող քաղաքական ուժ» հոդվածներում:

Բաաս կուսակցության և ալավիական վարչակարգի ներսում իշխանության համար ծավալված պայքարն ու Սիրիայի ներքաղաքական իրադարձությունները հանգամանորեն քննության են առնված նաև Ն. Վան Դամի³⁶, Պ. Վոլկերի³⁷ և Մ. Մաոզի վերոնշյալ աշխատություններում: Նիկոլաոս Վան Դամն իր «Սիրիայում իշխանության համար պայքար. քաղաքականությունը և հասարակությունն Ասադի և Բաաս կուսակցության իշխանության տարիներին» աշխատությունում օբյեկտիվորեն ներկայացնում է իշխանության համար մղված պայքարի ընթացքը Բաաս կուսակցության ներսում, ալավիների հաղթանակը և «Մուսուլման եղբայրների» պայքարն ընդդեմ ալավիական վարչակարգի: Մ. Մաոզի «Դամասկոսի սֆինքսը. քաղաքական կենսագրություն» և «Սիրիան Հաֆեզ Ալ-Ասադի իշխանության օրոք. ներքին և արտաքին նոր քաղաքականություն» աշխատություններում հեղինակը հանգամանորեն ներկայացնում է Հաֆեզ Ալ-Ասադի վարչակարգի բնույթը: Հաֆեզ Ալ-Ասադի իշխանության տարիներին Սիրիայի տնտեսության զարգացման ընթացքի, ինչպես նաև՝ երկրի տնտեսական և ռազմաքաղաքական վերնախավերի սերտ հարաբերությունների խնդիրը մանրամասն քննարկվում է Պ. Վոլկերի «Սիրիայի քաղաքական տնտեսությունն Ասադի իշխանության տարիներին» աշխատության մեջ: Սիրիայի բաասական վարչակարգի դեմ մղած «Մուսուլման եղբայրների» պայքարի պատճառները, ընթացքն ու հետևանքները խորքային քննության են առնվել Ս. Մանուկյանի³⁸, Հ. Դեքմեջյանի, և Թ. Մայերի

³³Rabinovich I., Syria Under the Ba'th 1963-1966, The Army Party Symbiosis, Israel Universities Press, Jerusalem, 1972.

³⁴Umar F. Abd-Allah, The Islamic Struggle in Syria, Berkeley, California, Mizan Press, 1983.

³⁵Zisser E., The Syrian Army: Between the Domestic and the External Fronts, MERIA, Volume 5, No. 1 – March, 2001.

³⁶Van Dam Nikolaos, The Struggle for Power in Syria, Politics and society under Asad and Ba'th Party, I. B. Tauris Publishers, London-New York, 1996.

³⁷Volker P., The Political Economy of Syria under Asad, London, 1995.

³⁸Dekmejian H., Islam in Revolution, Fundamentalism in the Arab World, Second Edition, Syracuse University Press, 1995, Mayer T., The Islamic Opposition in Syria, 1961-1982, Orient, December, 1983, İaióéyi Ñ., Èñèàìñèéé

տեղի ունեցած ապստամբության մանրամասները և իշխանությունների կողմից կիրառված կոշտ ուժն ընդդեմ ապստամբների:

Ատենախոսության երկրորդ գլխում՝ «ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ 1982-1992 ԹԹ.», ուսումնասիրվում է 1982 թ-ից մինչև 1992 թ. Սիրիայում տիրող ներքաղաքական ճգնաժամը: Նախ քննության են առնվում նախագահի պաշտոնի համար Հաֆեզ Ալ-Ասադի և Ռիֆաթ ալ-Ասադի հակամարտության մանրամասները, դրանից հետո ուժերի հավասարակշռության ձևավորման հանգամանքները, ինչպես նաև բաասական վարչակարգի տնտեսական քաղաքականության հարցերը:

Առաջին ենթագլխում՝ «1983-1984 թթ. ներքաղաքական ճգնաժամը Սիրիայում և ուժերի հավասարակշռությունն ալավիական վերնախավում», ուսումնասիրվում է 1983-1984 թթ. բռնկված ներքաղաքական ճգնաժամի պատճառներն ու հետևանքները և դրա ազդեցությունը Սիրիայի տնտեսական և քաղաքական կյանքի տարբեր ուղղությունների վրա: Այն ցույց տվեց ռազմական գործիչների իրական ուժը, որի հետ արդեն ստիպված պետք է հաշվի նստեր նաև նախագահ Հաֆեզ Ալ-Ասադը, բայց մյուս կողմից էլ ակնհայտ դարձավ, որ Հաֆեզ Ալ-Ասադն, այնուամենայնիվ, մեծ հեղինակություն է վայելում բանակում, իսկ բանակն էլ շահագրգռված չէ քաղաքական ասպարեզից նրա հեռանալու մեջ: Վերլուծվում է ալալի գործիչների հարաբերություններում ձևավորված հետաքրքիր հակակշիռների այն համակարգը, որի շնորհիվ Հաֆեզի և Ռիֆաթի միջև ծագած հակամարտությունը չվերածվեց քաղաքացիական պատերազմի:

«Հետճգնաժամային ժամանակաշրջանը Սիրիայում 1987-1992 թթ.» երկրորդ ենթագլխում մանրամասն քննության են առնվում քննարկվող շրջանում Սիրիային առնչվող խնդիրները՝ երկրում խորացող տնտեսական ճգնաժամը, իշխանության համար շարունակվող պայքարը վարչակարգի ներսում, Իսրայելի նկատմամբ ռազմավարական հավասարակշռություն՝ այսինքն հավասարություն պահելու դժվարությունները, Լիբանանում տիրող քառսային իրավիճակը, միջարաբական հարաբերություններում աճող մեկուսացումը և, վերջապես ԽՍՀՄ-ի հետ հարաբերությունների անորոշությունն ու արևմտյան պետությունների հետ հարաբերությունների ճգնաժամը: Հանգամանորեն անդրադարձ է կատարվում 1980-ականների վերջին Սիրիայում սաստկացող ներքին և արտաքին բազմաթիվ խնդիրներին: Սիրիական վարչակարգը երկրի ներսում հայտնվեց տնտեսական առումով շատ ծանր դրության մեջ, իսկ Արևելյան Եվրոպայում տեղի ունեցող փոփոխությունների լույսի ներքո երկրում քաղաքական բարեփոխումների կարիք էր զգացվում: Տարածաշրջանային քաղաքականության համատեքստում Սիրիան այլևս չէր կարողանում պահպանել իր ազդեցության լծակները Լիբանանի տարբեր ուժային կենտրոնների վրա, միջարաբական հարաբերություններում երկիրը հայտնվել էր մասնակի մեկուսացման մեջ: Բացի այդ միջազգային հարաբերություններում Սիրիան պարտավորվում էր հաշվի նստել արևելաեվրոպական կոմունիստական վարչակարգերի,

հատկապես Խորհրդային Միության փլուզման և Ամերիկայի Միացյալ Նահանգների՝ համաշխարհային միակ հզոր պետության ի հայտ գալու փաստերի հետ: Այս փոփոխությունների արդյունքում 1980-ականների վերջին Սիրիան սկսեց ձևավորել նոր քաղաքականություն, որպեսզի կարողանար ԱՄՆ-ի կողմից կառավարվող աշխարհում վերածնվել իր դիրքերը: 1989 թ. վերահաստատվեցին Սիրիայի և Եգիպտոսի միջև դիվանագիտական հարաբերությունները, իսկ 1990 թ. նկատվեց Սիրիայի և Արևմտյան Եվրոպայի երկրների ու ԱՄՆ-ի հետ հարաբերությունների ջերմացում: Այս ենթագլխում ուշադրություն է դարձվում նաև սիրիա-խորհրդային և սիրիա-չինական ռազմական համագործակցությանը:

Աշխատանքի երրորդ գլխում՝ «ՈւԱԶՄԱԲԱՂԱԲԱԿԱՆ ԻՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՐԻԱՅՈՒՄ ԵՎ ԱԼԱՎԻ ՎԵՐՆԱԽԱՎԸ 1992-2000 ԹԹ.», հանգամանորեն ուսումնասիրվում են Սիրիայում 1990-ական թթ. սկսված իշխանության փոխանցման նախապատրաստման գործընթացը, իշխանության շարունակականության պահպանմանն ուղղված ջանքերը և Բաշար Ալ-Ասադի կողմից երկրի նախագահի պաշտոնի ստանձնման հանգամանքները:

Առաջին ենթագլխում՝ «Իշխանության հաջորդականության նախապատրաստման խնդիրը Սիրիայում 1992-1996 թթ.» քննարկվում է Հաֆեզ Ալ-Ասադի ստեղծած քաղաքական համակարգի շարունակականության և կենսունակության պահպանման խնդիրը, որի լուծումը Սիրիայի նախագահը տեսնում էր իշխանության ժառանգական սկզբունքով փոխանցման մեջ: Տարիներ շարունակ հետևողականորեն զբաղվելով Բաշարին իշխանության սահուն փոխանցման կազմակերպմամբ՝ Հաֆեզ Ալ-Ասադը բոլոր ջանքերը գործադրեց, որպեսզի որդու նախագահ դառնալը սիրիական հասարակությունը կապեր նրա անձնական արժանիքների և հանուն հայրենիքի բարօրության կատարած ծառայությունների հետ՝ փորձելով անխոցելի դարձնել խնդիրը լեգիտիմության տեսանկյունից: Ընդ որում, նախագահի պաշտոնի համար Բաշարին նախապատրաստելու գործընթացն իրականացվեց չորս մակարդակներում. Բաշարի համար ռազմական և անվտանգության կառույցներում հենարանի ապահովում, ապագա առաջնորդի հեղինակության բարձրացում սիրիական հասարակության լայն խավերի մեջ, կառավարման արվեստի հմտությունների տիրապետում և միջազգային ասպարեզում հեղինակության ստեղծում:

Երրորդ գլխի վերջին ենթագլխում՝ «Ներքաղաքական իրավիճակը Սիրիայում և իշխանության փոխանցումը Բաշար Ալ-Ասադին (1996-2000 թթ.)», քննության է առնվում իշխանությունը Բաշար Ալ-Ասադին փոխանցելու հետ կապված ներքաղաքական իրադարձությունների ընթացքը, այսպես կոչված «հին գվարդիայի» անդամների պաշտոնանկություններն ու Բաշարին հավատարիմ նոր սերնդի ներկայացուցիչներին զինվորական և քաղաքական տարբեր պաշտոններում նշանակելու խնդիրները:

Ուսումնասիրվում է նաև Բաշար Ալ-Ասադին Հաֆեզ Ալ-Ասադի ծրագրի համաձայն Բասս կուսակցության բարձրագույն մարմնի՝ տարածաշրջանային ղեկավարության անդամ դարձնելու խնդիրը, որը Բաշարի համար պետք է ապահովեր նախագահի պոտենցիալ թեկնածու համարվելու անհրաժեշտ կարգավիճակ: Հաֆեզ Ալ-Ասադը 2000 թ. հունիսին վախճանվեց և դրանից հետո հասարակության տարբեր խավերը համախմբվեցին Բաշարի շուրջ՝ ապահովվելու երկրի կայունությունն ու անվտանգությունը:

1970-ական թթ. սկզբից մինչև 2000 թ. Սիրիայի Արաբական Հանրապետության ներքաղաքական և ռազմական կյանքում ալավիների ունեցած դերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 1963 թ. մարտի 8-ին տեղի ունեցած հեղաշրջման արդյունքում իշխանության եկած Բասս կուսակցությունն այնպիսի նպաստավոր ներքաղաքական իրավիճակ ձևավորեց երկրում, որ փոքրամասնությունների ներկայացուցիչները, մասնավորապես կուսակցության ալավիական թևը ներկայացնողները, կարողացան Սիրիայի իշխանական վերնախավում կարևորագույն պաշտոններ զբաղեցնել: 1970 թ. նոյեմբերին Սիրիայում Հաֆեզ Ալ-Ասադի իշխանության գալով ալավի փոքրամասնության իշխանության հաստատումն իրողություն դարձավ և Սիրիայի պատմության մեջ բացվեց մի նոր էջ:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ մեջ, ամփոփելով ատենախոսության հիմնական արդյունքները, ատենախոսը եզրակացնում է.

- 1922-1942 թթ. քսանամյա ալավիա-ֆրանսիական հարաբերությունները, ալավիների 17-ամյա քաղաքական անկախությունը, հետագայում անկախ Սիրիայի իշխանությունների կողմից նրանց ճանաչումը որպես մուսուլմանական համայնք, նպաստեցին, որպեսզի ալավիները դուրս գան մեկուսացումից և մասնակցեն անկախ Սիրիայի կայացման գործընթացին: Ֆրանսիացիների հետ հարաբերությունները նպաստեց ալավիների սոցիալական, քաղաքական և համայնքային կյանքի տարբեր բնագավառներում առաջընթացին, իսկ ալավիական ինքնավար պետության շրջանը նրանց հնարավորություն տվեց քաղաքականության և ռազմական գործում դառնալ ավելի փորձառու: Սիրիական իշխանությունների կողմից, որպես մուսուլմանական համայնքի ճանաչումը, ալավիներին թույլ տվեց լիիրավ իրացնել իրենց ձեռք բերած հնարավորությունները:
- Սիրիայում Բասս կուսակցության իշխանության գալը նշանավորեց երկրի զարգացման բոլորովին նոր փուլի սկիզբը: Սիրիայում ամուր դիրքեր ունեցող սպայական անձնակազմի երկրորդ սերունդը զիջեց իր դիրքերը, իսկ ստեղծված վակուումը լրացրեց սպաների նոր սերունդը, որը խիստ տարբերվում էր իր նախորդից: Առաջ մղվեցին Հոմսի Ռազմական ակադեմիայի շրջանավարտները, որոնք հիմնականում ալավիական համայնքի և կրոնական այլ

փոքրամասնությունների ներկայացուցիչներ էին: Այսպես, ալավիները զբաղեցրին 700 ազատ սպայական հաստիքների կեսը: Ալավի սպաները զինվորական պաշտոններ ստանձնեցին հիմնականում մայրաքաղաքում՝ հետզհետե սուննիներին հեռացնելով դեպի ծայրամասային նահանգներ:

- 1963 թ. մարտին Բաաս կուսակցության իշխանության գալուց հետո ներկուսակցական և ներիշխանական պայքարը շարունակվեց: Այն մարդիկ, ովքեր քիչ թե շատ բարձր պաշտոններ էին զբաղեցնում պետական համակարգում, փորձում էին համախմբել իրենց կողմնակիցներին՝ ելնելով ազգակցական, ցեղային կամ համայնքային շահերից: Ժամանակի ընթացքում այս իրողությունը հանգեցրեց պետական համակարգում ալավիների գերիշխանության ամրապնդմանը:
- Հաֆեզ Ալ-Ասադի իշխանության գալով՝ Սիրիայում սկսեց ձևավորվել նախագահին հավատարիմ և նվիրված իշխանական նոր վերնախավ, որի կլանային կառուցվածքը հիմնված էր ոչ միայն համայնքային կապերի, այլև՝ մասնագիտական սերտ հարաբերությունների և նույն ուսումնական հաստատության՝ Հոմսի Ռ-ազմական ակադեմիայի սան լինելու փաստի վրա: Նշված բոլոր գործոնները ստեղծել էին յուրահատուկ իշխանական մի դասակարգ, որի կազմում «օտարների» ընդգրկումը գրեթե անհնար էր:
- 1975 թ. ապրիլին Լիբանանում սկսված քաղաքացիական պատերազմից հետո արաբական որոշ երկրներ դադարեցրին օգնություն ցուցաբերել Սիրիային Լիբանանի նկատմամբ վարած քաղաքականության պատճառով, որից հետո երկրում գնաճ և բնակչության մեծամասնության կենսամակարդակի անկում արձանագրվեց: Զուգահեռաբար տեղի էր ունենում քաղաքական և տնտեսական վերնախավերի սերտաճում: Բաաս կուսակցության իշխող վերնախավը, զինվորական շրջանակների վերին էլեյթոններն ու կառավարության անդամները հարստանում էին, իշխանական վերնախավը համալրվում էր կարիերիստներով, ինչը բացասական հետք էր թողնում նախագահ Ալ-Ասադի հեղինակության վրա: Հասարակության դժգոհությունը պայմանավորվում էր Սիրիայի իշխանական համակարգում տիրող իրավիճակով, երբ ալավի փոքրամասնության իշխանությունը երկրում սկսեց բացարձակ անսքող դառնալ:
- «Մուսուլման եղբայրներ» կրոնաքաղաքական կազմակերպության կողմից իրականացված ծայրահեղական գործողություններն արտաքին և ներքին դրդապատճառներ ունեին: Քաղաքական և ռազմական սպանված գործիչների մեծ մասն ալավիներ էին: 1978 թ. հոկտեմբերին սիրիա-իրաքյան հարաբերությունների ժամանակավոր բարելավումից հետո, ակնահայտ դարձավ, որ իրագործվող ահաբեկչական գործողությունների համար պատասխանատվություն են կրում սուննի ծայրահեղական խմբերը, որոնք Սիրիայում հաստատված ալավիների

«տոհմահամայնքային» վարչակարգը համարում էին հակախլամական:

- Ալավիների ռազմաքաղաքական իշխանության հաստատումը Սիրիայում 1982թ. արդեն իրական փաստ էր, քանի որ Սիրիայի սոցիալ-տնտեսական, քաղաքական և ռազմական բնագավառում ցուցաբերած արդյունավետ գործունեությամբ ալավիական վարչակարգը մեկ տասնամյակի ընթացքում կարողացավ ի ցույց դնել իր կենսունակությունը: Ալավիների բաասական վարչակարգը Սիրիայի Արաբական Հանրապետության պատմության մեջ բացեց մի նոր էջ, որը բնութագրվում էր առանց հեղաշրջումների և այլ ցնցումների համեմատաբար կայուն ներքաղաքական իրադրությամբ, պետական իշխանության դիրքերի ամրապնդմամբ, կառավարման ուրույն մշակույթի ձևավորմամբ: Սիրիայում ալավիների վարչակարգը տասնամյա ժամանակաշրջանում կարողացավ ձևավորել մարտունակ բանակ, ստեղծել բազմաթիվ լծակներով օժտված արագ արձագանքման զինված միավորումներ, կարգավորել հատուկ ծառայությունների աշխատանքը՝ յուրաքանչյուր ստորաբաժանմանը տալով գործունեության հստակ լծակներ, որի արդյունքում բարձրացավ զինված ուժերի մարտունակության մակարդակը: Բացի այդ, իշխանությունների ձեռք առած միջոցների արդյունքում կտրուկ բարելավվեց Սիրիայի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը, բարձրացավ կենսամակարդակը:
- Չնայած 1983-1984 թթ. ներքաղաքական ճգնաժամը չվերածվեց քաղաքացիական պատերազմի և «Մուսուլման եղբայրների» հակամարտությունն ավարտվեց Հաֆեզ Ալ-Ասադի հաղթանակով, սակայն ճգնաժամի ժամանակ ակներև դարձավ, որ նախագահի ստեղծած ավտորիտար վարչակարգի հիմքերն անասան չեն:
- Հետճգնաժամային ժամանակաշրջանում Սիրիայում սոցիալ-տնտեսական իրավիճակն աստիճանաբար լարվում էր: 1987 թ. վարչապետ Աբդ Առ-Ռ-աուֆ Ալ-Կասսիմ փոխարինեց բաասական քաղաքական գործիչ՝ Ժողովրդական ժողովի նախագահ Մահմուդ Ալ-Չուբին: Աբդ Առ-Ռ-աուֆ Ալ-Կասսիմ պաշտոնանկությունը և Մահմուդ Ալ-Չուբիի նշանակումը նպատակ էր հետապնդում ֆինանսապես անապահով սիրիական հասարակությանը ցույց տալ, որ իշխանությունները ցանկանում են լուծել կոռումպացված տնտեսական խնդիրները:
- Սիրիայի ներքին կայունությունը պահպանելու համար իշխանությունները 1992թ. մարտին Հաֆեզ Ալ-Ասադի նախագահ վերընտրվելու առիթով մեծածավալ համաներում հայտարարեցին, որը ցույց էր տալիս վարչակարգի ինքնավստահությունը: Ազատ արձակվեցին 2864 բանտարկյալներ, որոնք դատապարտվել էին հակաիշխանական հայացքների պատճառով: Համաներումը նպատակ ուներ ցույց տալ իշխանությունների բարյացակամ վերաբերմունքը Սիրիայում իսլամական խմբավորումների նկատմամբ, քանի որ ազատ

արձակվածների մեծ մասը «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության անդամներ էին:

- Ներքաղաքական իրադրությունը Սիրիայում 1982-1992 թթ. ընթացքում պայմանավորվում էր մի շարք ներքին և արտաքին գործոններով: Ներքին գործոններն էին իշխանության համար պայքարը ալավիական վերնախավում, մասնավորապես Ալ-Ասադ եղբայրների միջև, «Մուսուլման եղբայրներ» կրոնաքաղաքական շարժման անդամների և կառավարական ուժերի միջև տեղի ունեցող բախումները, Լիբանանում տիրող քառասային իրավիճակը, միջարաբական հարաբերություններում աճող շրջափակումը և վերջապես ԽՍՀՄ-ի հետ հարաբերությունների անորոշությունն ու արևմտյան պետությունների հետ հարաբերությունների ճգնաժամը: Իշխանության համար անբարենպաստ այս գործոնների ազդեցության պայմաններում ալավիական վերնախավը կարողացավ պահպանել հարաբերական կայունություն Սիրիայի ներսում և ապահովել խաղաղություն Իսրայելի հետ առձակատման պայմաններում:
- Չնայած 1992 թ. Հաֆեզ Ալ-Ասադը արդեն չորրորդ անգամ յոթամյա ժամկետով ընտրվել էր Սիրիայի նախագահ, սակայն ընտրվելուց մեկ տարի անց սկսեց նպատակապես աշխատանք տանել երկրում բարձրագույն իշխանությունն իր ավագ որդուն՝ Բասիլ Ալ-Ասադին փոխանցելու ուղղությամբ: Վերջինիս մահից հետո երկրում անորոշ իրավիճակ ստեղծվեց, և բոլորը լարված սպասում էին, թե Բասիլից հետո զավակներից ով է լինելու Հաֆեզին փոխարինողը: Վերջինս սկսեց առաջ քաշել իր մյուս որդուն՝ Բաշար Ալ-Ասադին: Նրա թեկնածության թեկուզև անուղղակի արժարժումը նախագահի համար քաղաքական հաշվարկներ կատարելու յուրահատուկ ինդիկատորի դեր խաղաց: Այսինքն, իշխանության անցումը որդուն՝ Բաշարին, փոխանցելու նպատակով անհրաժեշտ էր նախ շոշափել զինվորականների տրամադրությունները: Առկա կասկածամիտ գործիչներն էլ աստիճանաբար պաշտոնանկ արվեցին: Ալավի բարձրաստիճան զինվորականների պաշտոնանկությամբ սկսվեց սերնդափոխության մի գործընթաց, որը հիմնականում ուղղված էր Բաշար Ալ-Ասադի դիրքերի ամրապնդմանը Սիրիայի զինվորական շրջանակներում, ապա նաև քաղաքական բեմահարթակում:
- 1992-2000 թթ. ժամանակահատվածը Սիրիայի համար ռազմաաքաղաքական վերադասավորումների շրջան էր: Զանի որ 1990-ական թթ. սկզբին Սիրիայի ներքաղաքական կյանքի կարևորագույն հարցերից մեկը դարձավ իշխանության հաջորդականության խնդիրը, իշխող ալավիական վերնախավը սերնդափոխության գործընթաց սկսեց երկրի ռազմական և քաղաքական համակարգերում: Պաշտոնները բացառապես ստանձնում էին Հաֆեզ Ալ-Ասադի որդուն՝ Բաշարի հավատարիմ և նվիրված գործիչները: Վարչակարգը շփման

եզրեր էր փնտրում նաև «Մուսուլման եղբայրների» ղեկավարության հետ, որպեսզի վերջիններս նույնպես աջակցեին Բաշարին նախագահ դառնալու հարցում: «Մուսուլման եղբայրներին» սիրաշահելու համար բանտերից ազատ էին արձակում կրոնաքաղաքական շարժման ակտիվիստներին: Պետք է փաստել, որ ռազմաքաղաքական վերադասավորումների արդյունքում Սիրիայում տեղի ունեցավ իշխանության անցնցում փոխանցում հորից որդուն: Ալավիական վարչակարգը շարունակեց կառավարել սուննի մեծամասնություն ունեցող արաբական այս երկրում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Сирийските Алауити-история и съвременност, Военноисторически сборник, N 1, 2011, София, сс. 125-134.
2. «Մուսուլման եղբայրների» պայքարն ընդդեմ արավիական վարչակարգի 1976-1982 թթ. «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, 21-րդ դար տեղեկատվական-վերլուծական հանդես, հ. 3 (37), 2011, էջ 18-32:
3. 1983-1984թթ. ներքաղաքական ճգնաժամը Սիրիայում և ուժերի հավասարակշռությունն արավիական վերնախավում, «Օրենք և իրականություն», հ. 5, (187) Երևան, 2011, էջ 27-30:
4. Իշխանության հաջորդականության նախապատրաստման խնդիրը Սիրիայում 1993-1994 թթ., «Բանբեր Երևանի Համալսարանի» գիտական հանդես, ԵՊՀ, Հասարակական գիտություններ, Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, 133. 6, Երևան, 2011, էջ 55-64:

ВАРДАНЯН ГРИГОР КАРАПЕТОВИЧ
РОЛЬ АЛАВИТОВ ВО ВНУТРИПОЛИТИЧЕСКОЙ И ВОЕННОЙ ЖИЗНИ
СИРИЙСКОЙ АРАБСКОЙ РЕСПУБЛИКИ (1970-2000гг.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по
специальности 07.00.02 - “Всемирная история”.

Защита состоится 16-го июня 2011г., в 15.00 часов на заседании специализированного
совета 006, действующего при Институте Востоковедения НАН РА, по адресу: 0019, г.
Ереван, пр. Маршала Баграмяна, 24/4г.

РЕЗЮМЕ

Диссертационная работа посвящена исследованию периода правления Хафиза аль-Асада в Сирии (1970-2000гг.), процесса становления военно-политической власти алавитов, их роли в различных сферах жизни страны.

Всестороннее изучение вопросов, касающихся данного периода истории Сирии, имеет важное научное значение для выявления, глубокого понимания и объективной оценки внутривнутриполитических процессов в Сирии в 1970-2000 гг., а также целей и специфики важной роли алавитов в данных процессах.

После установления власти Хафиза аль-Асада Сирия перешла на качественно новый уровень развития с точки зрения формирования и укрепления формы государственного управления. В стране сформировалась новая культура политического и экономического развития, с помощью которой режиму алавитов удавалось эффективно противодействовать внутренним и внешним проблемам и добиваться значительных успехов в процессе решения задач, поставленных перед государством.

Исследуемая тема актуальна также с точки зрения разработки принципов ближневосточного направления внешней политики Республики Армения, а также курса развития армяно-сирийских отношений, учитывая тот факт, что Сирия является одним из важнейших партнеров Армении в ближневосточном регионе.

Целью диссертационной работы является:

- 1) всестороннее исследование процесса становления власти алавитов в Сирии и их религиозно-общинных особенностей;
- 2) изучение политических тенденций партии Баас, пришедшей к власти в Сирийской Арабской Республике после революции 8 марта 1963 г., а также исследование тенденций образования алавитской правительственной элиты внутри партии;
- 3) выявление процесса становления военно-политической власти алавитов и

освещение ее развития в годы правления Хафиза аль-Асада;

4) анализ причин и предпосылок завоевания алавитами доминирующей роли в государственной системе правления вследствие объединения их родственных, клановых и общинных интересов;

5) выявление мер, направленных на укрепление военно-политических позиций алавитов, а также основных факторов, содействующих этому процессу;

6) исследование предпосылок, процесса и результатов борьбы “Братьев мусульман” против режима алавитов;

7) выявление причин внутривосточного кризиса, начавшегося в Сирии в первой половине 1980-х годов;

8) изучение посткризисного периода в Сирии в 1986-1992 гг.;

9) исследование проблем, возникших во внутривосточной жизни Сирии в новых геополитических реалиях после распада СССР, а также выявление изменений в алавитской элите в свете подготовки правопреемственности власти в Сирии.

Отдельные аспекты роли алавитов в политической жизни Сирии освещались в историографии, но по содержанию и структуре данная диссертационная работа является первым подобным исследованием не только в отечественном, но и в зарубежной историографии.

Методологической основой диссертационной работы является сравнительно-сопоставительное исследование фактов и анализ разнообразных вопросов, точек зрения и источников, касающихся предпосылок и процесса укрепления военно-политической роли алавитов в Сирии, а также приоритетов их политики.

Работа имеет традиционную структуру и включает в себя введение, основную часть, состоящую из трех глав, которые в свою очередь подразделяются на параграфы, заключение, список использованных источников и литературы.

Во ВВЕДЕНИИ обосновывается актуальность выбора темы исследования, определяются его цели, задачи и научная новизна, характеризуется методологическая основа, практическое значение и хронологические рамки работы, а также дается краткий обзор использованных источников и литературы.

В первой главе диссертационной работы, озаглавленной “АЛАВИТЫ И ИХ ВЛАСТЬ В СИРИИ (1969-1982 ГГ.)” подробно рассматриваются религиозно-общинные особенности алавитов, их военно-политическая власть в Сирии (1969-1976 гг.), роль алавитов в Вооруженных силах, внутривосточная борьба за президентскую власть, а также борьба “Братьев Мусульман” против режима алавитов (1976-1982 гг.). В конце дается краткий обзор заключений, сделанных в данной главе.

Вторая глава диссертационной работы, озаглавленная “ВУТРИПОЛИТИЧЕСКАЯ

ОБСТАНОВКА В СИРИИ В 1982-1992 гг.” посвящена исследованию периода внутривнутриполитического кризиса в Сирии в 1982-1992 гг. В первую очередь рассматриваются борьба Хафиза аль-Асада и Рифата аль-Асада за президентскую власть, подробности образования баланса сил, а также вопросы экономической политики режима Баас. Исследуется причинно-следственная связь внутривнутриполитического кризиса, возникшего в 1983-1984 гг., а также анализируется система интересных противовесов в отношениях алавитских деятелей, благодаря которой проблема, возникшая между Хафизом аль-Асадом и Рифатом аль-Асадом не переросла в гражданскую войну. В данной главе рассматриваются также проблемы, относящиеся к периоду истории Сирии в 1987-1992 гг., в частности нарастающий в стране экономический кризис, продолжающаяся борьба за власть внутри правительственной элиты. Далее дается краткий обзор заключений, сделанных в данной главе.

Последняя, третья глава диссертационной работы озаглавлена “ВОЕННО-ПОЛИТИЧЕСКАЯ ОБСТАНОВКА В СИРИИ И АЛАВИТСКАЯ ЭЛИТА В 1992-2000 ГГ.” В ней подробным образом исследуется процесс передачи власти, начавшийся в Сирии в 1990-х годах, рассматриваются действия, направленные на обеспечение преемственности власти, а также обстоятельства принятия поста президента Башаром аль-Асадом. В данной главе также рассматривается проблема сохранения преемственности и жизнеспособности политической системы, созданной Хафизом аль-Асадом, исследуются внутривнутриполитические факторы, связанные с передачей власти Башару аль-Асаду, в частности отстранение от должностей представителей так называемой “старой гвардии” и вопросы, связанные с назначением на военные и политические посты представителей нового поколения, преданного Башару аль-Асаду. В конце дается краткий обзор заключений, сделанных в данной главе.

В ЗАКЛЮЧЕНИИ диссертационной работы представлены основные выводы по рассмотренным проблемам. В частности, благодаря эффективной деятельности в социально-экономической, политической и военной сферах жизни Сирии, алавитский режим в течение трех десятилетий показал свою жизнеспособность. Режим алавитов открыл новую страницу в истории Сирийской Арабской Республики, которую можно охарактеризовать сравнительно стабильной внутривнутриполитической обстановкой, без политических переворотов и других сотрясений, укреплением позиций государственной власти, формированием специфичной культуры правления.

GRIGOR VARDANYAN

**THE ROLE OF ALAWITES WITHIN INTERPOLITICAL AND MILITARY LIFE OF
SYRIAN ARAB REPUBLIC (FROM 1970 TO 2000)**

The Dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of
Philosophy in the Field of “World history” 07.00.02.

The Defense of the Dissertation will take place at 15.00 on June 16, 2011 at the Meeting of
Specialized Council 006 acting at the Oriental Studies Institute of NAS RA. Address: 0019,
Yerevan, av. Marshal Baghramyan, 24/4

S U M M A R Y

The dissertation is devoted to the research of Hafiz Al-Assad’s reign in Syria from 1970 to 2000, the process of establishing of the military-political authority of Alawites and their role in different spheres of national life. The comprehensive research of the issues relating to the given period of Syrian history has a great scientific importance for identification, understanding and objective evaluation of internal political processes in Syria from 1970 to 2000, as well as the goals and specifics of the important role of Alawites in that processes. After the establishment of Hafiz Al-Assad’s rule Syria moved to a new level of development in terms of establishing and strengthening the form of state governance. A new culture of political and economical development was formed in the country with the help of which the Alawites regime managed to counteract effectively against internal and external problems and made significant progress in addressing the tasks of the state. The researched topic is also relevant in terms of development of principles of the foreign policy of the Republic of Armenia towards the Middle-East, as well as the rate of development of Armenian-Syrian relations, given the fact that Syria is one of the important partners of Armenia in the Middle-East.

The goals of the thesis are: 1) comprehensive research of the process of establishment of the Alawites’ rule in Syria and its religious and community features; 2) research of political tendencies of the Baas party, which came to power in Syria after the revolution on March 8, 1963, as well as research of formation tendencies of the governmental elite of Alawites inside the party; 3) identification of the process of establishment of military-political rule of Alawites and coverage of its development during the reign of Hafiz Al-Assad; 4) analysis of reasons and prerequisites for the conquest of Alawites dominant role in the state government system by combining their family, clan and community interests; 5) identification of measures aimed to strengthening of military-political positions of Alawites, as well as the main factors influencing

the process; 6) research of preconditions, process and results of the struggle of “Muslim Brothers” against the Alawites rule; 7) identification of the cause of internal political crisis that began in Syria in the first half of 1980’s; 8) research of post-crisis period in Syria from 1986 to 1992; 9) research of issues, which occurred in the new geopolitical realities of the internal political life of Syria after the fall of USSR, as well as identification of changes in Alawite elite in terms of transmission of power in Syria.

Certain historiographers covered separate aspects of the Alawite role in the political life of Syria, but by its content and structure, this thesis is the first research of its kind not only in the internal, but also in the foreign historiography. The thesis has a traditional structure, which includes an introduction, a body consisting three chapters, which are at the same time divided into paragraphs, a conclusion and a list of the used sources and literature.

In the INTRODUCTION, the relevance of the research, goals, challenges and scientific innovations are determined, practical significance and chronological periods of work are characterized, as well as the short summary of used historians and literature are given.

In the first chapter of the thesis, entitled “ALAWITES AND THEIR AUTHORITY IN SYRIA 1969-1982”, religious and community features of Alawites, their military-political power in Syria from 1969 to 1976, the role of Alawites in Armed forces, inner-party struggle for presidency, as well as the struggle of “Muslim Brothers” against the Alawites’ regime from 1976 to 1982 are discussed in detail. A brief overview of conclusions drawn from the chapter is given in the end of it.

The second chapter of the thesis, entitled "INNER-POLITICAL SITUATION IN SYRIA 1982-1992" is devoted to the research of political crisis in Syria in the years 1982-1992. In the first place, the fights of Hafiz Al-Assad and Rifat Al-Assad for presidency, the details of formation of balance of forces, as well as issues of economic policy of the Baath regime are featured. The causal link of the inner-political crisis of 1983-1984, as well as the analysis of the system of interesting balances in the relations of Alawite authorities, due to which the problem arisen between Hafiz al-Assad and Rifat al-Assad did not grow into a civil war are researched. This chapter also overlooks issues related to Syria in the years 1987-1992 and in particular the economic crisis growing in the country and the ongoing struggle for power within the government elite. In the end the brief overview of the conclusions drawn from the chapter are given.

The third and at the same time the last chapter of the thesis is entitled “THE MILITARY-POLITICAL SITUATION IN SYRIA AND THE ALAWITE ELITE IN THE YEARS 1992-2000”. The process of transferring of power, which began in Syria in the 1990’s is studied, actions for legitimate transfer of power, as well as circumstances of taking the presidency by Basharomal-Asad Al-Assad are overlooked.

The issues concerning the preserving of continuity and viability of the political system created by Hafiz Al-Assad, in particular the dismissal of the so-called “Old guard” and issues related to the appointment of new generation representatives devoted to Bashar Al-Assad on military and political positions are also overlooked in the final chapter. In the end the brief overview of the conclusions drawn from the chapter are given.

In the CONCLUSION of the thesis the main conclusions drawn from the overlooked issues are featured. In particular, due to the effective activities in the social-economic, politic and military sphere of life in Syria, the Alawite regime proved its viability for three decades. The Alawite regime opened a new chapter in the history of Syria, which can be characterized by a relatively stable political situation without political upheavals and other shocks, strengthening of the positions of state government power, as well as formation of a specific culture of governance.